


ՊԱՏՄԱՆՔ

Տարեկան գ/Ն Կ. Պոլսոյ հմր. 10 Մէճ.
Պաւառաց 12 »
Վեցամս. Կ. Պոլսոյ 5 »
Պաւառաց 6 »
Ստար երկիրներու 2 1/2 լ
Դանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրոշ, երկու անգամի հա-
մար 2 դուշ Կ. աւելի անգամներու
համար գաւա սակարկութիւն կըլ-
այ :
Իւրաքանչիւր թիւ 40 փարս արծ :



ԼԵՐԱՔԵՐ

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

ՊԱՏՄԱՆՔ

Գրեւոր գնացած լրագրաց ճանրու-
ած քաղաք խմբագրութեան վրայ է :
Լրագրոյ վերաբերեալ նամակ
կամ որ և ինչ գրութիւն խմբագիր
— Տնօրէնին պիտի ուղղուի : Ղալա-
միա Սահարաքը շատ տարի ի իս
198, Նոթո իսան, Մասիսի գրասեն-
եակը :
Հանրու ծախքը չիմարուած նա-
մակ չընդունուիր :
Չարուած նամակ, յողում, և
ետ չեն արուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԽԱՆԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 1 ՄԱՐՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հայաստանի մէջ տիրած սարսա-
փիւն սոյն ազգային և քաղաքական
կարեւորագոյն խնդիրն է մեզ համար,
որովհետեւ ազգային գոյութեան խն-
դիրը վեր է ամեն քաղաքականութե-
ան և ամեն խնդրէ : Մասամբ հնձոց
նուազութեան, մասամբ յոռի վար-
չութեան և մասամբ ալ երկրին ան-
ապահով վիճակին և աւագակարարոյ
ցեղերու աստատակութեան պատ-
ճառաւ, իրաց այնպիսի վիճակ մ'ե-
րեան եկած է Հայաստանի մէկ մեծ
մասին մէջ, որ մահացու հարուած
մը տալ կ'ապաւնայ մեր հազարա-
ւոր ազգայնոց, որք արեւն նախան-
ձերի վիճակ մը չունենին, և որոց պա-
տերազմն ալ իւր ամեն տեսակ չար-
եօք ծանր փնտնեւ տուած էր :
Երբեք վիճակն այս է որ, ինչպէս անց-
եալ տարի կը վախճուէր, վառայնա-
հանգիւն և Պայաղիտի ու Սլաշիէրտի
գաւառաց և Բասնիի գաւառին բը-
նակիչներն, և մասնաւորապէս երկ-
րագործ Հայ Ժողովուրդը ստատիկ սո-
վէ մը կը տառապի ներկայ ձմեռային
եղանակին սկսելէն ի վեր, և մինչև
յառաջիկայ հնձոց ժամանակ, մա-
նաւանդ մարտ և տարիլ ամաց մէջ,
հասարակաց օգնութեանն դատ ապ-
րուտի միջոց չունին : Վաճեն արժա-
նահաւան անձի մը կողմանէ անցեալ
որ մեզ ուղեկոյ նամակ մը կը ծա-
նուցանէր թէ վասպուրականի 150
հազար Հայ Ժողովուրդն այս աղետին
ենթարկուած է : Ոչ նուազ ճշմարիտ
է թէ այդ թուոյն երկու երրորդին
մօտ Հայ Ժողովուրդը մը նոյնպէս սար-
սափելի վիճակ մ'ունի Պայաղիտի և
Գարնայ կողմն Սլաշիէս, քաղաք մի-
լիոնի հասնող Հայ անհատք, իրարմէ
աւելի կամ նուազ տարբերութեամբ,
մահու և կենաց միջև կը տատանին
Հայաստանի կարեւորագոյն մասին
մէջ : Ոչ նուազ խղճալի է Տիարայէ-
քիւրի կողմէ և Քրդաստանի ներսի
կողմերը դանուաղ Հայոց և ուրիշ Ժո-
ղովուրդաց վիճակը : Ռուսական Հայաս-
տանի բնակիչք ալ լաւագոյն վիճակ
մը չունին :

Այս է ահա ներկայ կայութիւնն,
և ամեն մարդ, մանաւանդ ամեն
Հայ, անշուշտ համամիտ պիտի լինի
մեզ, երբ ըսեմք թէ անգարմանիկ
կորուստք և արկածք կրնան ծագիլ
եթէ ամբողջ ազգը՝ վտանգին մեծու-
թիւնն ըմբռնելով՝ անձնու իրարար
օգնութեան ձեռք չկտրուէ իւր
սովորուի աղքատկցաց : Արդարեւ,
վասպուրականի կողմը Հայ տարրն
արեւն դառն հարուած կրած է
ներկայ աղետէն : Միայն մէկ անգա-
մէն գեղացի Հայոց չորս հարիւր

չափ ընտանիքներ, մասամբ թշուա-
ռութեան և մասամբ քրդաց աւա-
րառութիւններէն ստիպեալ, թողեր
իրենց ծննդեան վայրն և դէպ ի
Պարսկաստան գաղթեւ են, ուր թըշ-
ւառագոյն վիճակ մը կ'ապաւնէ իրենց :
Վասպուրականի ուրիշ կողմերէն ալ
այսպիսի Հայկական գաղթականութե-
թիւնք սեղի ունեցեր են ամենա-
թշուառ պայմանաց ներքեւ : Արդէն,
մեր Ժամանակակից պատմութեան
գառն ճշմարտութիւններէն մին է, որ
ամենայնոց պարագայից մէջ կատար-
ւած Հայ գաղթականութիւններէն
անգամ նոյնքան կորուստներ եղած
են ազգին թէ՛ նիւթագէս և թէ՛ բա-
րոյապէս : Թշուառութիւնն ու հա-
րըստահարութիւնք էին որ քառորդ-
գար առաջ վասպուրականի մէջ Տըզ-
մուս գետի (Պէնտիմահի) և Ապա-
ղայի գաւառին, միւլ լանիւ վանայ
և Պայաղիտի միջև գտնուող այն գը-
րախտային երկրին Հայ գեղացիներն
ստիպեցին Ռուսա գաղթելու իրաւէ որ
այժմ այդ գեղացուց մէկ մասն իրենց
նոր հայրենեաց մէջ նիւթագէս կա-
րելի եղածին չափ բարեբաւտի կայու-
թիւն մ'ունենալով հանգրձն՝ կը հա-
ռաչէ իւր հայրենի երկրին համար, և
ստուգիւ գիտեմք որ այդ Հայ գաղ-
թականաց գոնէ մէկ մասն այժմ ա-
մեն զոհարութիւն իւր աչքը պիտի
առնուր վերագաւառու համար իւր
հայրենի երկրին մի այնպիսի տեղն,
որոյ հին յիշատակները միշտ քաղցը
են ամեն Հայոց : Բայց գաղթանի ձեռք
մ'արդէն օգուտ քաղած էր իրաց
այնպիսի վիճակէ մը, զոր պարզամտք
միայն կրնան անհոգութեան կամ
սովորական դիպաց արդիւնք համա-
րիլ : Երբեք ահա Հայ տարրին թու-
ղած մէն մի մասնաւոր գետին շու-
տով Բուրդ տարրին ձեռքն անցած
է, որ այժմ զօրաւորապէս հաստատ-
ւած է վասպուրականի այդ հիւսի-
սային մասին մէջ (որ ինչպէս յայտնի
է՝ վարդանայ պատերազմին յիշա-
տակով սրբաբոցն է), և ընդ-
հանրապէս խօսելով, վաճեն Պայա-
ղիտ տանող երկիրը, կէս գար առաջ
Հայ տարրին զօրաւորագոյն զիւրե-
րէն մին այժմ զընթէ բոլորովին Բըշ-
դաբնակ դաւառ մ'է . . . : Այս է
ահա միշտ Հայկական թշուառութեանց
և Հայկական գաղթականութեանց
պատմութիւնը, թէ՛ վասպուրականի
մէջ լինի, թէ՛ Տարսնոյ մէջ, թէ՛ Բա-
սնի կողմն և թէ՛ Սլաշիէրտի լեռանց
վրայ : Այս է ահա որ իրաւունք կու-
տայ Պ. Տ. Սարգսեանի, այսինքն՝
վանայ սովորոյ յանձնախմբին քա-
տուղարին՝ երբ անցեալ շարթմառ առ
մեզ ուղղած մէկ կարեւոր նամակին
մէջ կըսէր . . . : Եթէ անվիշակաւ
օգնութիւններ չհասնին, մինչև ցարդ
սոցային վերակենդանութեան մա-
սին մեր ունեցած ջանք և յոյսերը

կարող են ի դերեւ երևի . . . վասն
զի երբ տկոտանայ կամ մեռնի վա-
պուրականը, Հայ և Հայաստան կը
մեռնին . . . :
Առաջ, յանուն ազգային գոյու-
թեան, որ այսպէս սարսափելի վը-
տանդի մը մէջ կը գտնուի, յանուն
Գրիստիէական Ս. սկզբանց, որք են
գթութիւն և ողորմութիւն, յանուն
մարդասիրութեան, որ միակ յոյսն է
այժմ մեր հազարաւոր տարաբաղ-
ազգայնոց, յանուն վերջապէս մարդ-
կային ամենախմբի և ամենափոքր
զգացմանց, որք տարակոյս չկայ թէ
պիտի յուզուին այդքան թշուառու-
թեան առջև, հրաւեր կը կարգաւք
մեր բոլոր ազգայնոց, Թուրքաբնա-
կաց և Ռուսաբնակաց, կամ ուր որ
ալ լինին, ինչ սեռէ որ լինին, ինչ
աստիճանի կարողութիւն որ ունե-
նան, հրաւեր կը կարգաւք, որպէս զի
ներկայ վիճակին համեմատութեամբ
յոգնութիւն փութան իրենց Հայաս-
տանցի եղբարք և քրոջ, հարց և
մարդ, որպէս զի սքառ, վայրկեանական
յուսահատութեան դէմ գնելու կա-
րող լինին, և իրենց հայրենի երկրին
մէջ գտնեն հոյի պոտառ մը՝ որչ
մնաւու համար, մինչև որ առաւ
հոնձք մը լաւագոյն օրեր բերէ ի-
րենց :

Առնուած լուրերն աղեկաւ են :
Նոքա որք չեն գաղթեւ, կամ գաղ-
թել ուղեկով ճանքան չեն մեռնիր,
իրենց գիւղերուն մէջ ժամէ ի ժամ
մահուան կ'սպասեն : Կը ցուրիքը
սեղ թէ վասպուրականի մէջ մինչև
ցարդ սովէն մեռնողներ ալ պակաս
չեն եղած, և բնական է որ մարդ-
ասրաւի՝ երբ մտածէ որ՝ եթէ մի-
շև ցարդ մեր տաւած տեղեկութեանց
համեմատ, որք բնականաբար յոյժ
ցանցառ են հազարաւորական դըժ-
ուարութեանց պատճառաւ, Հայաս-
տանի սովորանք գաւառաց մէջ ի-
րաց վիճակն այսչափ յուսահատական
է, հազար ո'րչափ դառն վիճակ մը
պիտի տարողուր մեր առջև՝ եթէ ա-
մեն մէկ դիւրի կամ վիճակի կրած
տառապանքները մի առ մի նկարագ-
րուէին մեզ : Կը յուսաւք սակայն, որ
արդի կայութեան դառնութիւնը
ճանչելու և ըստ այնմ օգնութեան
ձեռք կարկառեալ համար՝ ազգն
այդպիսի նկարագիրներու պէտք չը-
պիտի առնեայ : Լոնտոնի Սիդ զիւ-
կան յանձնախմբին ալ, որոյ անգամ
են Լորտ Սալիսպըրի, Լորտ Քարնտը-
փօն, Լորտ Շաֆթըսպըրի, Գեյթիէր-
պըրի արքեպիսկոպոսը, Սըր Սիօրա
Գեյմալ, Սըր Հէնրի Բօլիստըն, և այլ
նշանաւոր անձինք, առ Սիդ զիւկան
Ժողովուրդն ու զրաժ հրաւերին մէջ
յոյժ տոգոր կերպիւ կը նկարագրէ
իրաց վիճակն : Ամեն օր, կըսէ, ի-
րարու վրայ հեռագրէր կու գան սո-
վասանք գաւառներէն՝ ծանուցա-

նող թէ սոյն հեղուհեռէ կը սաստկա-
նայ և թէ հազարաւոր մարդիկ պի-
տի կորսուին եթէ մինչև հնձոց ժա-
մանակ առաւ օգնութիւնք չհաս-
նին փութով : Պ. Թրօթթըր, Պ. Քը-
լէյթըն և ուրիշ հիւպատոսք՝ հան-
գանակութեանց միջոցաւ անվիշակաւ
օգնութիւն հաղցներու հարկը կը
յայտեն :

Գոհութեան արժանի է որ մայ-
րաքաղաքին մէջ կաղմալ Հայկական
յանձնախմբը մինչև ցարդ երեք
հազար սիկիւ աւելի գումար հաւա-
քեց : Բայց ցուրտի է մտածել որ ու-
րիշ սովորանք գաւառները մէկ կողմ
թողով, մի միայն վանայ և կարող
նահանգաց մէջ արկող թշուառու-
թեան առջև իսկ, այդ երեք ամը-
ւան ջանից արդիւնքն եղող 3000 սո-
կին շատ թեթեւ կամ տկար օգնու-
թիւն մը պիտի լինի, իրաւ է որ
մինչև ցարդ այդ գումարը կաղմալու
համար սովորականէն յոյժ աւելի
քանակութեամբ ազգայինք մասնակ-
ցեցան հանդանակութեան, և թէ
ինչպէս Օրմանեան Գերաշնորհ Տ. Մա-
գաթիա վարդապետ մեծ իրաւամբ կը
գիտէր իւր « Կարօտ եմ » ճառին
մէջ, այս պարագայի կը ցուցնէ որ
ազգին մէջ քրիստոնէական և ազգա-
յին պայքարներ միշտ կենդանի են,
թէ և հանդանակութեան մասնակ-
ցողք նիւթական աւելի յաջող վիճակ
մը չունին աւելի արդիւնաւոր հանդա-
նակութիւն մը գոյանալու համար :
Այսու ամենայնիւ կը յայտարարուի
սու հետեւ. ոչ միայն հանդանակութեան
չմասնակցած ազգայինք պիտի փու-
թան իրենց լուծայն զրկել տայիսի
մարդասիրական և ազգասիրական
գործի մը համար, այլ և նոքա որ
մինչև ցարդ մասնակցած են, ամեն
անգամ որ սեղան կը նստին, պիտի
յիշեն որ մեր հայրենի երկրին մէջ
ալ կան հազարաւոր Հայ մահաւորք,
Հայ կանայք, Հայ ծերունիք, միւլ
բանիւ, բաղնիքի Հայ Ժողովուրդք,
որք ամեն օր հոցի պէտք ունին, և
միանգամ ընդ միշտ պատառ մը հայ
ուսեւրով՝ չեն կրնար ամիսներով կեն-
դանի մնալ :

Գալով Լոնտոնային Սիդ զիւկայոց
միջոցաւ զրկուելիք օգնութեան, կը
յաւելմք որ չեմք կրնար փոխել մեր
այն գաղափարը թէ գործն եթէ Հա-
յաստանի Հայոց օգնութիւն հասցը-
նելու վրայ է, « Ստատու շատ բարձ-
րըն է, և Սիդ զիւկա շատ հեռին »
խօսք մը զոր ժամանակաւ յուսահատ
Ժողովուրդը մը (Լեհացիք) դորձա-
ծած են, երբ իրենցմէ դատ մէկէ մը
յոյս չունէին ազգային գոյութիւնը
պաշտպանելու : Արդարեւ, Սիդ զիւկա
Ժողովուրդը նոյն խիւ Բրիտանական
կղզեաց մի մասն եղող Իրլանդացի ազ-
քատաց և սովորոյ համար, ինչպէս
նաև ուրիշ նախադասներու համար :

2 Գաղաթիվ աչ, Իսսի. Պէշիկի. Գաւգի. ՈրԴաք. Պէշի. Չէնի
Արեւալ. Գաւաւ. Լ. Բ. Հիւսար, Գաւի. Էմիլի. Ենիբե. Պէշ.
Եղգ. Թարաթաւ. Պէշիլեքաւ. Ինիլիսաւ. 2
30 ՊէշիկիԹաւ, ՈրԴիլեք. Գաւրէշ Արեւալ. Պէշիլեք. Բ. Հիւսար,
Պէշաւ. Լիթի. Ինիբե. Թարաթաւ. Պէշիլեքաւ. Մէզգարաւ.



Դ. Պօլիս Ս. Բանդիւք Եղբայր քով, Ֆարմասի Պրիթմանիք
Բէրա Մեծ փողոց և Էմմենտ Բարիւէնայի քով, Անդ-
ղիական մթերանոց, Եիւքսէք Գալտորրմ Դալաթիա:

[illegible]

ඇය, ජාතික ජනරජයේ

A detailed line drawing of a four-poster bed. The bed features a quilted mattress and a decorative headboard and footboard with a crisscross pattern. The bed is supported by four ornate legs. The drawing is in a classic, engraved style.

Ազնիւ և հասարակ քարեօլանի
երկաթէ և արոյրէ , աժան զինեւոյ
կը ծախուի, Կ. Պօլիս Գալաթիա Մի.
նասեան և ընկերայ Սմերիկայի մա.
զազան :



ԱՐԳՈՒՆ

Այս ձև իւթիւներուն ամենէն ազնիւ տեսակը որուն մէջ կրակը չը մաշուի և աւելի կը գործէ, կը ծախուի Կ. Պոլիս Դաւաթիա Մինասեան և ընկերաց Սմերիկայի մաղադան:



ԿԱՐԻ ԳՈՐԾԻՔ

Փոքր ակունձէն կոշտած ձեւ
քով դարձող ու անքակ կար կարող
դորձիք ամեն տեսակ կար մեծ դիւ-
րութեամբ կը կարէ ու գինն ալ ա-
ժան է, երայլաւորութեամբ կը տըր-
ւի, արուածնէնը կը չափուի ու կա-
քել չդիտողներն դառն կարտուի, կը
մշտուի Կ.Պոլսի Ղալաթիա Մինաս
եան Ե. Բնկերաց Սմերիկայի մարդանշ